

ՆԱԻԹԱՁՐՁԱՆԻ ԲԱՆԻՈՐՆԵՐԸ

ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺԱԿԱՆԵԱՆԻ

(Շարունակութիւն ¹⁾)

Նաւթաշըջանի բանւորները կազմւած են Ղարաբաղի, Զանգեզուրի և Շամախու գիւղացիներից, Դաղստանի զաւակներից, որոնց բացարձակ առաւելութիւն է տրւում; Հորեր փորելու գործում, ռուս գաղթականներից և պարսկահպատակ թուրքերից: Այս ազգութիւններից համարեա բոլոր հայերն ու պարսկահպատակները պանդուխաններ են (ոչ գաղթական), իսկ ռուսների մեծ մասը գաղթականներ են, քիչ մոսը պանդուխաններ ²⁾: Բոլոր բանւորները ներկայացնում են հողից բաժանած գիւղացի և միջոցներից զրկած արհեստաւորներ ու անզործութիւններից իրանց հայրենիքում աւելորդ դարձած մարդիկ:

Կովկասի արքունական գիւղացիների հողատիրութեան և կեանքի հետազօտաթիւնները ցոյց տվին, որ Անդրկովկասում, շատ քիչ բացառութիւններով, տիրում է սակաւահողութիւն: Այդ սակաւահողութիւնը դրդում է գիւղացիների աւելորդ աշխատող ձեռքերին պանդուխելու զանազան կողմեր, գործ վնտրելու համար: Այսպէս օրինակ՝ Ղարաբաղի Սիսիանի կամ Զանգեեազուրի և Շամախու գիւ-

1) Տես «Մուլճ» 1892 №№ 10, 11, 12 և 1893 թ, № 3.

2) «Պանդուխտ» խօսքը հասկանալով պ. Ա. Արասխանեանցի տւած բացարձակ թեամբ, տ. «Մուլճ» 1889 № 11 և 1890 № 6 «Պանդուխտ» թեան խնդիրը»:

զացիները թափում են Բագու։ Հին-Նախիջևանի գիւղերը (Թմբուլը, Նիսմահմուլը, Թագագիւղը, Խարիմջան և այլն) իրանց պանդուխտներին ցրւում են Եւրոպական Ռուսաստանի և Կովկասի շատ կողմերը։ Ալէքսանդրապոլի գաւառը դեռ ոչ մի հեռու կողմի վրայ որոշ հոսանքներ չի հանել։ Այս վերջին երկու տարիներում նշմարում են Բագու ձգւողների կարապետները (դեռ բոլորը քաղաքից)։ Ուշադրութեան արժանի է, որ այդ քաղաքից (Ալէքս.) ամենից առաջ պանդխտում են ուսուցչական դասակարգին պատկանող բազմաթիւ երիտասարդները, որոնց վրայ, ընդհանրապէս, իրանց ծննդավայրը շատ ծուռ աչքով է նայում։ Նիրակի սակաւահող գիւղացիների միակ պանդխտատեղիներն են առայժմ Ալէքսանդրապոլ քաղաքը, ուր թափում են հունձի և կալի ժամանակները և վերջին պատերազմի ժամանակ խլւածնոր տեղերը (Ղարսը, Կաղզւանը, Սարիղամիշը և այլն)։ Նոյն երևոյթները տեղի ունեն և Երևանի, Ախալցխայի, Գանձակի և ուրիշ տեղերի համար։

Ուրեմն հայ գործաւորների և մշակ բանտորների Բագու պանդիխտելու պատճառը զիսաւրապէս սակաւահողութիւնն է։ Մօտաւորապէս նոյն պատճառն են բերում և ուսւ բանտորները։ Նրանցից շատերին հարցըել և մի պատասխան հմ ստացել. «Յեզեռլե, Յեզեռլե» ասում են թէ գիւղական գաղթականներն ու պանդուխտները, թէ քաղաքացիները։ Պէտք է նկատել, որ Բագու գալիս են առհասարակ Վոլգայի ափերին մօտ ընկած գիւղերից և քաղաքներից։ Իսկ այս վերջին 1891 թ. սովորակարգացանքան և աւելորդ մարդիկ ստեղծել, որ երբ մարդ մտածում է, մագերը վշաքաղում են։

Բագու գալիս են Պարսկաստանի այն մասերից, որոնք մօտ են ծովափին և ցամաքային սահմաններին։ Աւելի շատ պատահում են Արդարիլի շրջականների գիւղացիներ։ Հայը և Ռուսը պանդխտում կամ գաղթում են Բագու, որովհետև հող չկայ, գործ չկայ, որովհետև գործ է հարկաւոր, իսկ պարսկաստանցին չի պանդխտում անհողութեան կամ անդործութեան պատճառով։ Նրան դուրս է քշում իր երկրից տնտեսական կեանքի անիշխանութիւնը, նրա քայլքայման հասած դրութիւնը։ Պարսկաստանցին ունի հող, կարող է մշակել, լաւ արդիւնքներ ստանալ, բայց այդ արդիւնքները գին չունեն, մեռած են, որովհետև չի կարող ծախել. չկայ շուկայի։ Իսկ

շուկաների բացակայութեան պատճառն էլ Պարսկաստանի կիսավայրենի դրութիւնն է. չկան ճանապարհներ, հաղորդակցութեան և տեղափոխութեան յարմարութիւններ; Բայց հարկն ուզում են, և այն էլ նաղա փողով. բերքերով հարկ վճարել չի կարելի Պարսկաստանում; Խեղճ պարսկաստանցին շուտով վարում—ցանում է իր արտերն ու հողերը, հնձելը թողնում է իր կնոջ և ծերերի վրայ և ինքը գալիս է Բագու մի քանի կոպէկ աշխատելու, որ հարկերը վճարի; Արանք ամեն տեսակ խնայողութիւն գործեն դնում, որ շուտով վերադառնան: Քիչ չեն այն դէպքերը, երբ նաւթաղաշում կամ Աւ-Քաղաքի փողոցներում պարսկական հիւպատոսութեան ծառայողները, մատեանները թերերի տակին, թափառում են այս ու այն կողմէ, որ զանեն պարսկահպատակ բանւորներին և հարկերը պահանջեն:

* * *

Դրամատէրը ձգտում է միշտ քչացնել վարձագինը և շատացնել աշխատութեան ժամերը, իսկ բանւորը ձգտում է անել միշտ հակառակը: Եթէ որ և է արդիւնագործութիւն կարող է հանել անհրաժեշտ ժախսերը և մի բան էլ տիրոջն օգուտ պահել, այն ժամանակ այդ գործը համարւում է պահպանութեան արժանի ձեռնարկութիւն, եթէ ոչ՝ ոչնչանում է ինքն իրան: Երբ ձեռնարկութիւնն օգտակար է և բանւորների թիւը քիչ, բանւորի վարձագինը բարձրանում է. մվ չի համաձայնել ուրիշներին էլ բաժին հանել մի քիչ, եթէ համոզւած է, որ բաժինը փառաւոր է լինելու: Աւելի լաւ է բուրժուացի համար մի քանի կոպէկ աւելացնել բանւորի վարձագնի վրայ, որ ինքը մեծ օգուտներից չը դրկւի, քան թէ խնայել բանւորից և իրան էլ զրկել բոլորից: Երբ գործերն ընկած դրութեան մէջ են, օգուտը քիչ է, փոքր ձեռնարկողներն իսկոյն ափակում են իրանց խանութեները և գործից հեռանում: Բանւորների թիւն աւելանում է. դեռ ևս գործերը շարունակող մեծ ձեռնարկողներն սկսում են քչացնել վարձագինը և հասցնել այն չափին, որից պակասը չէր կարող մարդու ամենաանհրաժեշտ կարիքներն անգամ լրացնել: Ակառում է մրցում բանւորների մէջ. ով չի համաձայնւում, զուրս է գցուում: Խնչ փոյթ դրամատիրոջ համար, արդէն պատրաստ է ապահետի զօրքը: Բանւորն աւելի

յարմար է համարում քչով ծառայել, քան ոչինչ չը ստանալ, քաղցած ման գալ: Այդ ժամանակ որքան տեղեր կան, բռնւում են, իսկ մնացածները դուրս են ընկնում և դասնում «աւելորդ»: «Աւելորդ մարդկանց» թիւը շատանում է գործերի ձախ զրութեան, կրիզիսների ժամանակ, իսկ զործերի յաջող ժամանակներում կամ բոլորվին վերջանում է «աւելորդների» բանակը կամ այնքան քչանում, որ մնացածներն էլ կարող են լինում մի կերպ գլուխները պահել, վարձելով փողոցներն աւելելու, պատահական բեռներ տատանելու և ուրիշ գործերի համար: Բացի այդ երկու ծայրերից կայ և մի միջակ դրութիւն, որի ժամանակ ոչ բանորն է չափազանց նեղւում, ոչ էլ դրամատէրը:

Մեզանում էլ կատարում է այդ մրցումը տեղի համար, մեզանում էլ երեսում են երբեմն «աւելորդ» մարդիկ, բայց մինչև վերջին ժամանակներս այդ մարդկանց թիւը շատ քիչ էր: Վերջին ժամանակներս զգալի կերպով սկսել է կազմել «աւելորդ» մարդկանց» բանակը: Բայց այդ բանակը չի կարող կայուն լինել, չի կարող մեծ չափեր ստանալ, որովհետեւ արտադրութիւն է ժամանակաւոր պատճառի (Ռուսաստանի սովոր): Բացի դրանից չեն կարող շատ մարդիկ աւելորդ մնալ մեզանում, որովհետեւ մեր բանուորները գաղթականներ չեն, այլ միայն պանդուխտներ, որոնք կարող են թողնել և հեռանալ իրանց տեղերը, ուր կարող են այսպէս կամ այնպէս մի ամենաչնչն ապրուստ դռնէ գանել: Միւս կողմից «աւելորդ» մարդու դրութիւնը դեռ ևս մեզանում այնքան սարսափելի չէ, որքան Եւրոպայում: Լոնդոնում քաղցածութիւնից մեռնելլ հնարաւոր է «աւելորդ» մարդու համար, իսկ մեզանում դեռ ևս - ոչ. դեռ մեզանում շատ աւելի բարձր են տեղայիշական, հայրենակցական և ուրիշ նահապետական գովելի զգացմունքները: Անգործ մնացած ընկերոջը վերցնում են իրանց մօտ երկրացիները, մի առ ժամանակ սպահում, տեղ վնարում նրա համար և այն: Դեռ ևս . չը լսւած բան է մեզանում քաղցածութիւնից մեռնել:

Բնական է, որ մեզանում բանուորների տեղի համար վարած մրցութիւնն էլ այնքան խիստ չի կարող լինել, որքան աւելի զարդարած գործարանական կեսանք ունեցող երկրներում, ուր բացի գործարանական աշխատանքներից, ուրիշ ոչ մի կանոնաւոր աշխա-

տանք չկայ: Մենք էլ կանգնած ենք այդ ճանասլարհի սկզբին. բայց դեռ չենք ընկել նրա լայն մասերը... Մեր բանւորների մը ցումը լինում է միայն ազգութիւնների կողմից: Պարզեմ ասածս: Հայ բանւորը պանդուխտ է. նա եկել է ժամանակաւորապէս: Գործերը շատ վատացան, նա կը գնայ, ինչպէս և առհասարակ գալիս, մի քանի մանէթ հաւաքում, գնում են: Նոյնն է և Պարսկաստանցու կողմից: Մնում են Ռուս և Դերմանացի բանւորները: Սրանց թիւն էլ այնքան քիչ է, որ մեծ մրցում չեն կարող առաջացնել: Իմ ակնարկած մրցումը ուրիշ տեսակ մրցումն է. նա բնական հետևանք է զանազան ազգութիւնների ունեցած զանազանաչափ պահանջների: Ռուսը, Դերմանացին, Հայը աւելի կուլտուրական ժողովուրդ են, նրանց պահանջներն աւելի են, քան թուրքինը կամ պարսկաստանցունը. թուրքը կարող է երկու քարից մի օջախ շինել, վրան գնել մի թիթեղի կտոր, փողոցներից կամ դուրս թափւած աղբակոյտերի միջից հաւաքած փայտի կտորներ վառել, շագանակ խորովել, ծախել և օրական 20—30 կոպէկ աշխատել, կամ մի քանի տասնեւակ նարինջներ ածել զզրոցի մէջ, ամբողջ օրը թափառել փողոցներում, նոյն իսկ երբեմն կէս մասն էլ չը ծախել, էլի մի 20—30 կոպէկ վաստակել և դրանով իր պահանջներին բաւականութիւն տալ: Իսկ հայն այդքանով չի կարող բաւականանալ, ուռւմն աւելի ևս. սրանք ունեն իրանց մի քանի պահանջները, որոնցից չի կարելի զբկել նրանց, բայց թուրքն արդէն իսկ զրկւած է: Ռուս բանւորը մի քանի տօն օրերին երբէք չի բանիլ, որքան կողէք սոտիպեցէք նրան, իսկ հայն ու թուրքն այդ չեն իմանում: Այդպէս և ուրիշ պահանջներ, որոնց թւելն աւելորդ կը լինէր: Պարսկաստանցու պահանջներն աւելի ևս քիչ են, քան կովկասցի թուրքերինը: Այս թէ ինչն է պատճառը, որ պարսկաստանցին մի տեսակ բնական մրցող է հայ և ուռւ բանւորի համար, ինչպէս չինացիները Միացեալ-նահանգների բանւորների համար:

Մեր բանւորների վարձագնի մասին ևս յիշւած է յօդւածի զանազան մասերում առանձին առանձին, որից երեսում է, որ օրավարձը մշակ-բանւորների համար եղել է 40—60 կոպէկ, իսկ ամսավարձ բանւորի ոռձիկը եղել է մօտ 15—25 մանէթ, կամ օրական 50—80 կոպէկ: Այս բուն նաւթային դորձերում և այն էլ

մշակ-բանւորների և սրանցից դուրս եկած հնոցապանների, հարող-ների, քաշողների և հասարակ ամսավարձկանների համար, իսկ օժան-դակ արհեստներում ծառացող վարձկան արհեստաւորների համար ար-դէն թւեր կան. օրական չափն փականագործների համար—1—2 մանէթ (ռուբ.), ճախարակադործների համար—1,20—2,50, դարրին-ների համար—1,50—3,50, խառաւոնների համար 80 կ.—1 ռ. 50 կ., կաղապարագործների համար 1,50—2,50, ձևակերտողների համար—1,00—1,80, ձուլողների համար—1,50—3,00, և խլուկների կամ կաթսայագործների համար 80 կոպ.—2 մանէթ։ Բուն նաւթային գործում ծառացող օրավարձի և ամսավարձի չափսը դուրս է զալիս օրական 45—70 կոպէկ, իսկ վարձկան արհեստաւոր-ների համար միջին չափսը լինում է 1 մանէթ 16 կ.—2 մանէթ 45 կ.։ Խնչպէս տեսնում էք, զանազանութիւնը շատ խիստ է և աչքի ընկնող Արդէն ասացինք, որ սրա պատճառը մշակ-բանւորների բազ-մաթիւ լինելն է և արհեստաւորների քչութիւնը։ Ուշադրութեան արժանի է, որ ամեն մի ազգութիւն ստանում է ճիշտ այնքան աւելի վարձ, որքան նրա պահանջներն աւելի շատ են. ռուսներն ստանում են օրական 60 կոպէկ, հայերը—օրական 50 կ., իսկ սլարսկահպատակները—40 կոպէկ։ Խոյնն է և միւս ազգերի համար։ Միայն այս վերջին ժամանակներս սկսել է ընկնել վարձագինը։ Օրի-նակ 1891 թ. դեկտեմբերին բազմաթիւ ռուս սովետների պատճա-ռով, ռուս բանւորի օրավարձն ընկաւ մինչև 30—35—40 կոպէկի, հայինն էլ հասաւ մինչև 40-ի, իսկ պարսկահպատակինն աւելի և՛ մինչև 30-ի։ Կարելի էր, օրինակ, տեսնել այդ ռուս քաղցածների խմբերը, թէ ինչպէս աշխատում են դանդաղ, ծոյլ կերպով ևկա-պեան, ընկերութեան շադրւանի չորս կողմը, նաւթալների տեղերը պատրաստելու ժամանակ։

Թէ բուրժուազի ձգտումը երկարացնելու աշխատութեան ժա-մանակը, թէ վարձագնի տատանումները, թէ բանւորների իրար մէջ լարած մրցումը տեղի համար, թէ դրամատէրերի մրցումը բանւորների համար, թէ աւելորդ կոչւած մարդիկը և այլն և այլն չեն կարող ունենալ մեզանում այն խիստ և մեծ ձևերը, ինչ ու-նենում են նրանք նվազապայում կամ մի ուրիշ արդիւնագործական երկրում։ Ուրիշ հարց, եթէ Բագրուի նման արդիւնագործական կենդ-

րոնների թիւը շատ լինէր կովկասում, ուրիշ հարց, եթէ ամեն կողմ ցրւած լինէին գործարաններ ու արհեստանոցներ և զիւղական սակաւահողութիւնը աւելի զօրեղ լինէր: Իսկ առաջժմ մեր գործարանական կեանքը դրւած է այնպիսի բացառիկ պայմանների մէջ, նա այնպէս է կապւած պանդխտութեան խնդրի հստ, որ չի կարող ունենալ խիստ ու որոշ արտայացտութիւններ:

Ի հարկէ շատ հետաքրքիր կը լինէր վճռել այն հարցը, թէ ծրքան հնարաւոր է բանւորի համար ապրել լիշւած վարձով, ծրքան կարող է յետ ձգել, ինչ կը լինէր, եթէ ընտանք ունենար և այլն և այլն: Սրա համար հարկաւոր է աչքի առաջ ունենալ Բագուի թանդութիւնը, նաւթաղաշտի և Սև-Քաղաքի տների պակասութիւնը և ուրիշ շատ պատճառներ, որոնք բարդեցնում են հարցի վճռումը: Կաշխատեմ այդ մասին մի թեթև տեղեկութիւն տալ յօդւածի վերջերում, երբ կը խօսւի բանւորների ապրուստի մասին:

Մի քանի խօսք ևս վարձագնի մասին: Ամսավարձ բանւորներն աշխատում են օրական ուղիղ 12 ժամ, իսկ վարձկան արհետաւորները՝ նրանցից $1\frac{1}{2}$ ժամ պակաս. նոյնն է և օրավարձ մշակների համար: Եթէ բոլորի էլ աշխատանքի տևողութիւնը հաւասարեցնենք 12 ժամի, այն ժամանակ բուն նաւթաղին գործի բանւորների օրավարձը կը դառնայ 47—73 կ., իսկ արհետաւորներինը 1 ռ. 33—2 ռ. 80 կ.: Ուրեմն զանազանութիւնն աւելի ևս մեծացաւ: Ամենադժւար ֆիզիքական աշխատանքները բաժին են ընկնում մշակ-բանւորներին և ամենաշնչին, ամենասողորմելի վարձագինն էլ նրանց վզին է ընկնում: Այդպէս է ներկայ կեանքի բոլոր ձգտումը. ֆիզիքական աշխատանքը որքան կարելի է քիչ գնահատել, ճնշել, իսկ մտաւորը—որքան կարելի է բարձրացնել, շատ վարձատրել: Դրա հետեանքը լինում է այն, որ աւելի և աւելի սկսում է մեծանալ մտաւոր աշխատանքով ապրողի և ֆիզիքականով ապրողի մէջ եղած վիճը, աւելի սկսում է խստանալ այդ երկու զասակարգերի բնագիտական տարբերութիւնը. մէկը ձգտում է դառնալ միայն ջղերով ապրող, միւսը միայն մկաններով: Երկուսի դրութիւնն էլ հիւանդական է, երկուսն էլ դէսի կորուսո են գնալու, եթէ կեանքի կազմակերպութիւնը չը հասնի օգնութեան, եթէ

տեխնիկայի զարգացումը չօգնէ անել դրութիւնից դուրս գալու ։
Յաւալի է, որ մշակ-բանւորից դրամատիրոջ ստացած օգուտը
յայտնի չէ, եթէ ոչ շատ պարզ կերևար օգոււելու ձգուման հիշա-
ցին ականջները և շատ մարդիկ կը սարսափէին այդ օգուի
շափի և բանւորի ստացած վարձի համեմատութիւնից։ Բայց ինչ
որ յայտնի է, դիմենք նրան։ Մի փոքրիկ գործարանում ճախարա-
կագործն ստանում էր (91 թ. սեպտ. մինչև 92 թւի յունւարը)
1 ռ. 90 կ. օրավարձ, իսկ դարբինն ստանում էր 2 մանէթ։ Սրանց
11 ժամւաց (օրական) աշխատանքը գործարանատէրը գնահատում
էր 10 մանէթ։ Ի հարկէ կային և ծախսեր, բայց այդ բոլոր ծախ-
սերը հազիւ հասնէին 1—1 ռ. 50 կ. ամենաշատը, թող լինի 2 մա-
նէթ, նոյն իսկ 2,50 կ., բայց էլի ճախարակագործի աշխատանքից
օրական կը մնար 5 մանէթից աւելի արդիւնք, նոյնը և դարբ-
նից։ Եթէ դործի վրաց գնումը է երկաթ, պղինձ և ուրիշ նիւթեր,
պատէր աւողից այդ նիւթերի համար էլ աւանձին են վերցնում,
այնպէս որ յիշւած ծախսերը հաշւած է լուսաւորութեան, մեքե-
նաների փշանալու, հաշւապահի և ուրիշ ծախսերի համար Փակա-
նագործն ստանում էր (նոյն տեղում) օրական 1 ռ. 40 կ., իսկ սրա
գործը գնահատում էր 4—5 մանէթ։ Այդպէս է և ուրիշ գործա-
րաններում։ Զուլողները, նայեցէք, յաջող հանգամանքներում որ-
քան արդիւնք կարող են տալ։ Գործին շատ հմտւարհեստաւոր-
ներ վկայում են, որ բոլոր ծախսերը հանելով, ամեն մի փթից
զուտ արդիւնք մնում է մօտ 1 ռ. 20—1 ռ. 50 կ.։ Այդ մի փուլժ ձուլ-
ւածքից։ Յաջող հանգամանքներում կարող է շաբաթական երկու-
երեք անգամ ձուլում լինել, ամեն մի անգամին 100—140—150
փուլժ։ Օգուտն ահազին է... Իսկ այդտեղի ձուլողներն ստանում
են առհասարակ 1 ռ. 40 կ.—2 մանէթ, ոչ աւելի (խօսքս փոքր
և միջակ բանւորների մասին է)։

Այդ օժանդակ արհեստներում, որ դեռ գովլւած չեն «չաղ» օդ-
տով. իսկ ինչ է նաւթային գործը, այդ ուրիշ հարց է. Նրա ականջ-
ներն արդէն ամեն տեսակ չափից անցնում են։

Բանւորական ժամանակի մասին խօսած ժամանակ ասացինք,
որ գիշերացին աշխատութիւնը թէւ պարտաւորեցուցիչ չէ օրէնքով,
բայց de facto դուրս է գալիս պարտաւորական։ Պէտք է ճշմար-

տութիւնը խոստովանել. գիշերային աշխատանքի ամեն մի ժամը գնահատում է $1\frac{1}{2}$ ռուբլի. Այն էլ պէտք է ասել, որ այնքան են խուզում պոչից, ականջից, գլխից, որ կրկին դուրս է գալիս շատ անգամ ցերեկւայ հաշիւ:

Խնչպէս ուրիշ կարգերի, այնպէս էլ վարձագնի վերաբերութեամբ որոշ չափեր դնողները, սովորութիւն դարձնողները նոյն հիմնարկութիւններն են, ինչ արդէն մի անգամ ցիշեցինք:

(Կը շարունակի)